## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/6

25 հունիսի 2025 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամ:

Բացակա էին՝ Էդուարդ Բաբայանը (գտնվում է արձակուրդում), Ասպուրակ Պետրոսյանը (զորակոչվել է վարժական հավաքների), Պավել Ցուգունյանը, Գևորգ Պողոսյանը, Նաիրի Հակոբյանը, Հայկ Հարությունյանը, Վան Հարությունյանը և Արման Մեղրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Աննա Չոբանյանը, Դիաննա Երեմյանը, Արմեն Շմավոնյանը, Արամ Վիրաբյանը, Արմեն Սիմոնյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Դավիթ Զարոյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

ԼՍԵՑԻՆ

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Արովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հաստատել Արովյան համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 25-ի ութերորդ նստաշրջանի հերթական վեցերորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման 2025-2029 թվականների պլանը հաստատելու մասին.

3) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանն օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին.
4) Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 230-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.
5) «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.
6) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0164-0006 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
7) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի թիվ 97/1 հասցեում գտնվող հողամասն Արմեն Նալբանդյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
8) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Գետարգել գյուղի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4/1 հասցեում գտնվող հողամասը Հովհաննես Հայրապետյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Արզնու խճուղու թիվ 1/14/1 հասցեում գտնվող հողամասը Կարեն և Արփինե Թովմասյաններին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
10) Աբովյան համայնքի վարչական տարածքում գտնվող 5206.8 քառակուսի մետր մակերեսով հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին.
11) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Դարանի փողոցի 4 շենքի 19 բնակարանն անհատույց օտարելու մասին.
12) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Ռոսիայի փողոցի 4 շենքի 85 բնակարանն անհատույց օտարելու մասին.
13) Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 228-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
14) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
15) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Նախքան օրակարգի ներկայացումը, զեկուցողը հրապարակեց Աբովյան համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղարի գրությունը, որով Աբովյան համայնքի ղեկավարին տեղեկացվել է խմբակցության ղեկավարի փոփոխության մասին, այն է՝ խմբակցության արտահերթ նիստում խմբակցության ղեկավար է ընտրվել Տիգրան Գեղամյանը:
Զեկուցողի կողմից նախագիծը ներկայացնելուց հետո արվեց առաջարկություն՝ հաշվի առնելով ՀՀ գլխավոր դատախազության N 05.1//11265-2025 - 23/05/2025 հայց ներկայացնելու վերաբերյալ առաջարկությունը (մուտք՝ 23.05.25թ. N Պ-1463) և N 05.1//13580-2025 - 20/06/2025 գրությունը (մուտք՝ 20.06.25թ. Պ-1770), օրակարգի նախագծում ներառել «Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց ներկայացնելու վերաբերյալ հարցը քննարկելու մասին» հարցը: Ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Տիգրան Գեղամյանը նշեց, որ առաջարկվող նախագիծը

հարկավոր էր օրակարգի նախագծում ներառել ավելի վաղ՝ հաշվի առնելով ՀՀ Գլխավոր դատախազության 23.05.2025թ. գրությունը: Զեկուցողի, ինչպես նաև նախագծի հեղինակ, Աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ջանինա Սարգսյանը նշեցին, որ հնարավոր էր նաև այդ տարբերակը, սակայն սպասել են ՀՀ Գլխավոր դատախազության նոր գրությանը, որն Աշխատակազմում մուտքագրվել է 20.06.2025թ.՝ վերահաստատելով ՀՀ Գլխավոր դատախազության դիրքորոշումը: Տիգրան Գեղամյանը հայտարարեց, որ այդ դեպքում իրենք ձեռնպահ են մնալու հարցի քվեարկության ժամանակ, քանի որ ժամանակի սղության պատճառով չեն կարողացել գումարել խմբակցության նիստ և մանրամասն ծանոթանալ նախագծին: Ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Արմեն Քոսակյանը, կարծիք ներկայացնելով օրակարգի նախագծի վերաբերյալ, հայտնեց, որ իրավասու մշտական հանձնաժողովն օրակարգի նախագծի 1-ին կետի 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հարցերին չի տվել դրական եզրակացություն և առաջարկեց վերը նշված հարցերը հանել օրակարգից՝ հետագա քննարկում կազմակերպելու համար: Տիգրան Գեղամյանը հայտնեց, որ «Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց ներկայացնելու վերաբերյալ հարցը քննարկելու մասին» որոշման նախագիծն օրակարգում ներառելու դեպքում հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը կհայտնեն այդ հարցի քննարկման ժամանակ: Նախագիծը վերջնական տեսքով դրվեց քվեարկության՝ հանելով 1-ին կետի 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հարցերը, ինչպես նաև օրակարգում ներառելով «Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց ներկայացնելու վերաբերյալ հարցը քննարկելու մասին» որոշման նախագիծը:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -19 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|

Դ. ԶԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Պ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 99-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1.8-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1 - N 4 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ԶԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Պ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 100-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ Աբովյան համայնքի ավագանին որոշում է.
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման 2025-2029 թվականների պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Տիգրան Գեղամյանը զեկուցողից հետաքրքրվեց Ջրաբեր տանող ճանապարհին գտնվող աղբավայրի հետագա ճակատագրի մասին: Զեկուցողն, իր իրավասությունների սահմաններում, տվեց ամփոփ պատասխան՝ հաշվի առնելով «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող աշխատանքները:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -19 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|

Դ. ԶԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Պ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 101-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Դավիթ Զարոյանի (մուտք՝ 2025 թվականի հունիսի 09-ի N Ք-3828) զեկուցագիրը Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***՝
1. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի 1-ին շենքի հարող տարածքի (հիմք՝ 2025 թվականի մայիսի 14-ի N 14052025-07-0207) և Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասում գազատարերն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Աբովյանի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղին՝ սպասարկում իրականացնելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը միաժամանակ տեղեկացրեց, որ Որոշման նախագծում նշված Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասում կառուցված գազատարի վկայականը դեռևս պատրաստ չէ, ուստի առաջարկվեց տվյալ բառերը հանել նախագծից և այն ընդունել խմբագրված տարբերակով:
Ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Տիգրան Գեղամյանն առաջարկեց գրություն ուղարկել «Գազպրոմ Արմենիա» կազմակերպությանը՝ քննարկման առարկա դարձնելով այդ կազմակերպությանն անհատույց տրամադրվող գույքի ժամկետների հարցը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ԶԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Պ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 102-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 230-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2025 թվականի հունիսի 10-ի, N Ք-3842) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին» N 230-Ա որոշման հավելվածը լրացնել նոր՝ 6-րդ տողով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողն առաջարկեց որոշման նախագծին կից հավելվածում ավելացնել ևս մեկ տող՝ հաշվի առնելով, որ նիստի օրակարգի հաստատման և հրապարակման

ժամանակ այն տեղ չի գտել տեխնիկական պատճառով պայմանավորված:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը չի տվել դրական եզրակացություն՝ հարցը տեղափոխելով ավագանու նիստի քննարկմանը:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -12 | Դեմ -7 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| Դ. ՋԱՐՈՅԱՆ | Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | |
| Ա. ՔՈՍԱԿՅԱՆ | Ն. ՄԵԼԻՔՅԱՆ | |
| Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ | Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ | |
| Ռ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ | Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | |
| Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ | Պ. ՍԱՐԳՍՅԱՆ | |
| Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ | Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ | Տ. ԳԵՂԱՄՅԱՆ | |
| Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ | | |
| Ա. ԲԱԴԱԼՅԱՆ | | |
| Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | |
| Ն. ՋԱՐԳԱՐՅԱՆ | | |
| Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ | | |

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 103-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-013-0164-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Դավիթ Բաբայանի հայտը (մուտք՝ 2025 թվականի մայիսի 29-ի N Ք-3503), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Դավիթ Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 25122024-07-0195 վկայական) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0164-0006 կադաստրային ծածկագրով 0.2224 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (հողավոր) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնապահական տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով, միայն սեփականատիրոջ հայտի համաձայն,

համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դավիթ Բաբայանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՁԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ՁԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Պ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 104-Ա)*

---

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԵՏԱՐԳԵԼ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ ԹԻՎ 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 23-ի N 04-Ն որոշման, հիմք ընդունելով Հովհաննես Հայրապետյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի հունիսի 09-ի N Ք-3830), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Հովհաննես Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի ապրիլի 12-ի N 12042023-07-0135 վկայական) Աբովյան համայնքի Գետարգել գյուղի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող 07-058-0011-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 896.9 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2025 թվականի հունիսի 08-ի N 08062025-07-0001 վկայական) Աբովյան համայնքի Գետարգել գյուղի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4/1 հասցեում գտնվող 07-058-0011-0012 կադաստրային ծածկագրով 87.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-058-0011-0009 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Հովհաննես Վլադիմիրի Հայրապետյանին:

2. Հովհաննես Հայրապետյան պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 594 585 (հինգ հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր ութսունհինգ) դրամ՝ օտարվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Հովհաննես Հայրապետյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ԶԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Պ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 105-Ա)*

---

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 5206.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածով սահմանված կարգի 39-րդ կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2025 թվականի հունիսի 05-ի N ԱՏ-05062025-07-0598 տեղեկանքը և հաշվի առնելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2025 թվականի հունիսի 06-ի N Ք-3779), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի վարչական տարածքում գտնվող, որպես քաղաքացու անվամբ հաշվառված, սակայն հողամասի նկատմամբ իրավունքի ծեռքբերումը հաստատող փաստաթղթեր գոյություն չունեցող 07-023-0062- ծածկագրում 5206.8 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել Աբովյան համայնքի սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ԶԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Պ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 106-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 228-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2025 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարելու մասին» N 228-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝ որոշման 1-ին կետում 120-րդ տողից հետո լրացնել նոր՝ 121-142-րդ տողերով.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 121 | Համայնք Աբովյան, գ. Առինջ, Խ. Աբովյան թաղամասի 14-րդ փողոց 10 հողամաս | 1000,0 | 07-011-0353-0005 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 10 520.0 |
| 122 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջան 3-րդ թաղամաս թիվ 155 հողամաս | 400,0 | 07-002-0030-0195 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2740.0 |
| 123 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջան 3-րդ թաղամաս թիվ 156 հողամաս | 400,0 | 07-002-0030-0198 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 740.0 |
| 124 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ուսանողական թաղամաս 35 հողամաս | 13,4 | 07-002-0116-0469 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 100.0 |
| 125 | Համայնք Աբովյան, գ. Առինջ, Պ. Դուրյան թաղամասի 9-րդ փողոց 23 հողամաս | 3500,0 | 07-011-0143-0076 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 36 800.0 |
| 126 | Համայնք Աբովյան, գ. Պտղնի | 7704,45 | 07-054-0326-0038 | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 1 500.0 |
| 127 | Համայնք Աբովյան, գ. Գետարգել 7-րդ փողոց 26/1 հողամաս | 344,22 | 07-058-0028-0023 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 355.0 |
| 128 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 62/1 հողամաս | 68,9 | 07-002-0039-1920 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 475.0 |
| 129 | Համայնք Աբովյան, գ. Առինջ, Գ թաղամասի 4-րդ փողոց 2/7 հողամաս | 171,7 | 07-011-0788-0008 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 1 175.0 |
| 130 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Երիտասարդական փողոց 1/14 հողամաս | 43,2 | 07-002-0089-0415 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 460.0 |
| 131 | Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի | 221,1 | 07-043-0110-0046 | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 500.0 |
| 132 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Գառնու փողոց 12/3 հողամաս | 23,0 | 07-002-0082-0505 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 245.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 133 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Է. Պետրոսյան փողոց 31/1 հողամաս | 913,4 | 07-002-0048-0199 | արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերական օբյեկտների | 4 060.0 |
| 134 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 13-րդ փողոց 13 հողամաս | 1235,2 | 07-035-0143-0072 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 330.0 |
| 135 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 1-ին փողոց 112 հողամաս | 1500.0 | 07-035-0143-0076 | բնակավայրերի | հասարակական կառուցապատման | 2 820.0 |
| 136 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 15 հողամաս | 1200.0 | 07-035-0143-0075 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 260.0 |
| 137 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 17 հողամաս | 1200.0 | 07-035-0143-0074 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 260.0 |
| 138 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 13-րդ փողոց 12 հողամաս | 1173,8 | 07-035-0143-0073 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 210.0 |
| 139 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Արցախի փողոց 16 հողամաս | 438,5 | 07-002-0039-1882 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 1 950.0 |
| 140 | Համայնք Աբովյան, գ. Գեղաշեն, 2-րդ թաղամասի 6-րդ փողոց 4/2 հողամաս | 213,0 | 07-023-0259-0002 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 410.0 |
| 141 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ինտերնացիոնալի փողոց 6/10 հողամաս | 166,8 | 07-002-0075-0086 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 700.0 |
| 142 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Դարանի փողոց 4/16 հողամաս | 32,3 | 07-002-0086-0499 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 350.0 |
| 143 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս 30/1 հողամաս | 1324,1 | 07-002-0028 -0094 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 9 050.0 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Տիգրան Գեղամյանը կարծիք հայտնեց, որ ներկա պահին շրջանառության մեջ է գտնվում համապատասխան օրինագիծ, ըստ որի

նախատեսվում է աճուրդային կարգով օտարվող հողամասի մեկնարկային գին սահմանել այդ հողամասի շուկայական արժեքը՝ համապատասխան գնահատումից հետո: Ուստի, աճուրդների հարցում կարիք չկա շտապելու՝ սպասելով մինչ այդ օրենսդրական փոփոխությունների իրականացումը: Նիստը վարողը պատասխանեց, որ տեղյակ են հնարավոր օրենսդրական փոփոխություններին, սակայն համայնքային ծրագրերի շարունակական և բնականոն ընթացքն անհրաժեշտ է ապահովել:
Քննարկման արդյունքում առաջարկվել է նախագծի հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ 124-րդ, 128-րդ, 130-րդ և 132-րդ կետերով սահմանված հողամասերի մեկնարկային գներում կատարել նախնական արժեքի փոփոխություն:
124-րդ կետով սահմանված հողամասի 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:
128-րդ կետով սահմանված հողամասի 475000 (չորս հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 1475000 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:
130-րդ կետով սահմանված հողամասի 460000 (չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 1460000 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:
132-րդ կետով սահմանված հողամասի 245000 (երկու հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 1245000 (մեկ միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար ) ՀՀ դրամ:
Քվեարկության արդյունքում հարցը տեղափոխվել է ավագանու նիստի քննարկմանը:
12) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

Քվեարկության արդյունքում հանձնաժողովը հարցին տվել է դրական եզրակացություն:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -12 | Դեմ -7 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| Դ. ԶԱՐՈՅԱՆ | Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | |
| Ա. ՔՈՍԱԿՅԱՆ | Ն. ՄԵԼԻՔՅԱՆ | |
| Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ | Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ | |
| Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ | Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | |
| Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ | Պ. ՍԱՐԳՍՅԱՆ | |
| Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ | Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ | Տ. ԳԵՂԱՄՅԱՆ | |
| Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ | | |
| Ա. ԲԱԴԱԼՅԱՆ | | |
| Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | |

Ն. ՋԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 107-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. 2025 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:

3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Քվեարկության արդյունքները.*

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՉԱՐՈՅԱՆ
Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ
Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ
Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ն. ՉԱՐԳԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ն. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Պ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տ. ԳԵՂԱՄՅԱՆ
Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 108-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱՍՈՒ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության N 05.1//11265-2025 - 23/05/2025 հայց ներկայացնելու վերաբերյալ առաջարկությունը (մուտք՝ 23.05.25թ. N Պ-1463) և N 05.1//13580-2025 - 20/06/2025 գրությունը (մուտք՝ 20.06.25թ. Պ-1770), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից հայց ներկայացնելու վերաբերյալ առաջարկությանը և համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու գործընթաց սկսել:
2. Լիազորել Աբովյան համայնքի ավագանու անդամ Վրեժ Մամուլյանին Աբովյան

համայնքի ավագանու անունից հանդես գալ սույն որոշման առաջին կետում նշված գործողությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Տիգրան Գեղամյանը ևս մեկ անգամ հայտարարեց, որ իրենք ձեռնպահ են մնալու հարցի քվեարկության ժամանակ, քանի որ ժամանակի սղության պատճառով չեն կարողացել գումարել խմբակցության նիստ և մանրամասն ծանոթանալ նախագծին:

Առաջարկվեց «Հանրապետություն» խմբակցությունից Վրեժ Մամուլյանի թեկնածությունը՝ Աբովյան համայնքի ավագանու անունից հանդես գալու իրավասու դատարան հայց հարուցելու գործընթացում:

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -12 | Դեմ -0 | Ձեռնպահ -7 |
|---|---|---|
| Դ. ԶԱՐՈՅԱՆ | | Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ |
| Ա. ՔՈՍԱԿՅԱՆ | | Ն. ՄԵԼԻՔՅԱՆ |
| Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ | | Ա. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ |
| Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ | | Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ |
| Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ | | Պ. ՍԱՐԳՍՅԱՆ |
| Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ | | Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ | | Տ. ԳԵՂԱՄՅԱՆ |
| Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ | | |
| Ա. ԲԱԴԱԼՅԱՆ | | |
| Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | |
| Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ | | |
| Վ. ՄԱՄՈՒԼՅԱՆ | | |

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 109-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 17-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 19 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110 -Ա/

Ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԵՏԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՎՐԵԺ ՄԱՄՈՒԼՅԱՆ

*Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ*

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ____________